բողութիւնն ևս աւելի կը տկարանայ։ Այս բանս կը պատահի այն պատճառաւ, որովհետև տեսանելեաց ջիղն՝ որ ցանցատեսակին վրայ կ'աւարտի, այն ևս այլայլութիւն կը կրէ։

Ծխախոտիտն (nicotine) որ ծխախոտին ամենէն ազդու և թունաւոր տարրն է, այրելու ժամանակ կը ցնդի և կը տարրաբաշխի որով և ծխողն ալ շատ չի վնասուիր. բայց եթէ ծխախոտն թաց է կամ թացնայ ծխափողին մէջ կամ ծխողին շրթանց վերայ, սա արգելք կ'ըլլայ ծխախոտիտին տարրաբաշխման և անոր մէկ մասը ծխողին գործարանաց մէջ կը մտնէ և վերոյիշեալ աղետից պատճառ կ'ըլլայ։ Բուն ծխախոտիտն է պատճառ՝ որ շատ ծխողք արտաքին որ և իցէ իր մշուշ կամ աղօտ կը տեսնեն, գոյները լաւ չեն կրնար որոշել, և տեսութիւննին այնքան կ'այլայլի՝ որ մինչև իսկ կուրութիւն յառաջ կուգայ։ — Ոգելից ըմպելիք գործածողք շատ աւելի կը կրեն իրենց աչաց վերայ ծխախոտի վնասակար ազդեցութիւնը։

Այս վնասներէն զերծ մնալու համար՝ պէտք է որ ծխախոտն միշտ չոր ըլլայ, նոյնպէս նաև ծխափողն եղասով ծխել, և ոչ թէ ուղղակի շրթանց մէջ առնլով։ Դարձեալ բնաւ անօթի փորանց չի ծխել, և ոչ իսկ ընթերցման և գրելու ժամանակ, վասն զի ծուխը շարունակ աչաց առջև ըլլալով, շատ կը վնասէ աչաց արտաքին մասերուն։ Ծխախոտէն բոլորովին ետ կենալն անկարելի է, սակայն մտածելով այն ողբալի հետևանքները որ անտի յառաջ կու գան, լաւագոյն է չափաւորելն, որ միակ միջոցն է զերծ մնալու յիշեալ վնասներէն։

···⋙⋘···

ՀԱՐՄԱՆԱԼԻՔ ԿԱԶՄՈՒԱԾՈՅ ՄԱՐԴՈՅ

Մարդոյս մարմնոյն մէջ կան իբր 263 ոսկրներ. գնդերք են իբր 500, երկայնութիւն սննդական խողովակին է իբր 32 ոտնաչափ։

Չափահաս մարդոյ մը մարմնոյն մէջ գտնուած արեան չափն է 30 լիտր, կամ թէ ըսել բովանդակ մարմնոյն կշռոյն հինգերորդ մասը։

Սրտին երկայնութիւնն է 6 բթաչափ և տրամագիծը 4, և կը թնդայ սիրտը մէկ վայրկենի մէջ 70 անգամ, ժամուան մէջ 4200 անգամ, օրուան մէջ 100,800 անգամ, և տարուան մէջ 36,792,000, հաշուելով տարին 365 օր։ Եւ ամէն թնդալուն կամ բաբախման ժամանակ կը մղէ դուրս $2^{1}/_{2}$ ունկի արիւն, ժամուան մէջ 656 լիտր, և օրուան մէջ 15,744 լիտր։ Մարդոյս մարմնոյն բովանդակ արիւնը կ'անցնի սրտին մէջէն 3 վայրկենի մէջ։

Թոքերուն մէջ կը գտնուի օդ $2^{1}/_{2}$ լիտր ընդունակութեամբ սովորական վիճակի մէջ։ Շնչոյ տուրևառն է ժամուան մէջ 1200 անգամ, և օրուան մէջ իբր 30,000 անգամ։

Չափահաս մարդոյ ուղեղին կշիռն է 3 լիտր և 8 ունկի. կնոջ՝ 2 լիտր և 4 ունկի։

Ջիղերը ուղեղին հաղորդած են ուղղակի կամ ողնայարին ծուծին ձեռքով։ Ջիղերուն թիւը հանդերձ իրենց մանր ճիւղերով կ'անցի 10 միլիոնը, որ կը կապեն մարմնոյն միսը և կը պահեն։

Մորթը խաւ ի խաւ է, և կը տարբերի թանձրութեամբ 1 չորրորդէ մինչև 1 ութերորդ բթաչափի։ Մթնոլորտին ճնշումը ըլլալով մի քառակուսի բթաչափի վրայ 14 լիտր, մարդ մը չափաւոր հասակաւ կը կրէ իր վերայ 40,000 լիտր օդոյ ծանրութիւն։

Մորթոյ իւրաքանչիւր քառակուսի բթաչափին վրայ կան 3500 ծակտի արտաշնչելոյ կամ քրտան։

ԱԶԴ

Ընդունեցանք մեծաւ շնորհակալութեամբ Իսահակ Ժամհարեանցի ձեռքով ի Մոսկուա հրատարակուած *Խաչատուր Աբովեանի* ԵՐԿԵՐԸ, իբրեւ նուէր վանացս մատենադարանին։ Հրատարակութիւնս բաղկացած է 537 երեսներէ, հանդերձ Աբովեանի եւ նորա տան լուսատիպ յաջող պատկերներովը։ Տպագրութիւնը շատ մաքուր է եւ թուղթըն ընտիր։ Մեծ ծառայութիւն մատուցեր է ընթերցողաց, յարգելի հրատարակիչն, դնելով ի վերջ հրատարակութեանս՝ առանձին *բառարերր* իբրեւ մեկնութիւն Աբովեանի քով գործածուած օտար բառերուն եւ ասացուածոց, որով ամենուն հասկանալի կը լինի Քանաքեռցի բանաստեղծը, անփոփոխ պահելով բնագրի առանձնայատկութիւնքը։ Փափաքելի էր, որ գէթ այս կերպով՝ հեղինակի ուղղագրութեան հակառակ՝ սխալներըն սրբագրուած ըլլային, եթէ ոչ օտար բառերը։ Գինն է մէկ ռուբլի։

digitised by A.R.A.R.@